ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ «ՆՈՐԱՇԵՆ» ԱՄՍԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Մայիսի 25-ին Թբիլիսիի «Դավթյանների տիկնիկային թատրոնում» կայացավ Վիրահայոց թեմի Մշակութային հանձնախմբի և թեմի նախաձեռնությամբ լույս ընծայվող «Նորաշեն» հոգևոր, մշակութային, լրատվական հայ-ռուսերեն ամսագրի շնորհանդեսը: Ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Վրաստանի տնտեսական ենթակառույցների զարգացման փոխնախարար, ՎՀՄ նախագահ Հենրիխ Մուրադյանը: Այստեղ էին նաև վիրահայ մտավորականներ, ներկայացուցիչներ Թբիլիսիի պետական հայկական դրամատիկական թատրոնից, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միությունից, Թբիլիսիի հայկական դպրոցներից և վիրահայ հասարակական կազմակերպություններից:

Սրբազան Հայրը ողջունեց և օրհնության իր խոսքը բերեց ներկաներին: Առաջնորդը ներկայացրեց մշակութային հանձնախմբի անդամներին, խոսեց մշակույթի բնագավառում կատարվելիք բարեփոխումներից, որոնք մշակութային հանձնախմբի նախաձեռնությամբ կյանքի կկոչվեն մոտակա ամիսներին: Շնորհավորական ու բարեմաղթանքի իր խոսքում պարոն Սիլվանյանը մեծապես արժեվորեց հանձնախմբի ստեղծման գաղափարը և, համագործակցելու պատրաստակամություն հայտնելով, առաջարկեց նրա կազմում ընդգրկել ՀՀ դեսպանատան ներկայացուցչին ևս:

Ելույթներին հաջորդեց Մշակութային հանձնախմբի անդամ տիկին Ժաննայի և նրա ընտանիքի՝ Գոգա, Աննա և Սանդրա Դավթյանների կողմից ցուցադրվող տիկնիկային ներկայացումը: Օրվա խորհուրդը կրող և ազգային ոգով շնչող բեմականացումը Բարու և Գեղեցիկի, Խաղաղության և Բարեկամության ջատագով հանդիսացավ բոլորի համար:

Համաձայն վերոնշյալի, միջոցառման երկրորդ մասը նշանավորվեց «Նորաշեն»-ի շնորհանդեսով: Օրհնության իր խոսքը բերելով «Նորաշեն»-ի խմբագրակազմին, Սրբազան Հայրը պատգամեց պատասխանատու լինել ստանձնած առաքելության մեջ և խաղաղ ու արգասաբեր ընթացք մաղթեց ամսագրին: Ընթերցվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի՝ «Նորաշեն»-ին հղված Օրհնության գիրը:

Միջոցառումն անցավ ջերմ մթնոլորտում, ավանդական հյուրասիրությամբ:

Նշենք, որ «Նորաշեն»-ն իր բնույթով անդրանիկն է թեմի տասնհինգ դարերի պատմության մեջ և լույս է ընծայվում երկամսյա հաճախականությամբ: Ամսագրի հովանավորներն են Թբիլիսիի Սուրբ Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու կնքահայր Բլագոնրավով ընտանիքի և ԱՄՆ Արևմտյան թեմի Հարավային Կալիֆոռնիայի «Անապատի» Հայ Առաքելական Եկեղեցիները (հոգևոր հովիվ՝ Տ. Ստեփաննոս քահանա Դինգիլյան):

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ